Այս համարում

Հայերեն բաժին

1- Լուրեր – Իրանահայ համայնք 1
2- Լուրեր – Հայաստան.....3
3- Լուրեր– Սփյուռք.....4
4- Հասարակական.....5
5- Հարցազրույց-Ս.Սարգսյան.....8
6- Հարցազրույց -Ա.Գյուլ.....10

Սյունակների սղության պատճառով
Հրաչյա Աճառյանը Պարսկաստանում
եւ Հայ հին գրականություն հոդվածների շարունակությունը
կտպագրվի հաջորդ համարում

Պարսկերեն բաժին

1- Լուրեր- Իրանահայ համայնք 1
2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2

Շապիկի առաջին էջում՝
ՐԱՖՖի համալիրի սկաուտական 28-րդ բանակում

Շապիկի վերջին էջում՝
ՐԱՖՖի համալիրի սկաուտական 28-րդ բանակում

Համար 145, Օգոստոս 2008թ.

No. 145, August 2008

ماهنامه لویس – شماره ۱۴۵ امرداد ماه ۱۳۸۷

Վանիկ Բաղդասարյան

Լուրեր

Իրանահայ Համայնք

Կյանքի է կոչվել Պատգամավորական Ժողովի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով

Թեհրանի Հայոց Թեմի 13-րդ Պատգամավորական Ժողովի ժամանակաշրջանն ավարտվելու է 3-4 ամիս հետո, այդ իսկ պատճառով 14-րդ շրջանի ընտրություններն անցկացնելու նպատակով Թեմական Խորհուրդը կյանքի է կոչել Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով», որը պետք է զբաղվի մի շարք նոր առաջարկություններով, որոնք թելադրվում են համայնքում ստեղծված նոր պայմաններից: Նորակոչ հանձնաժողովը միաժամանակ տարբեր թաղերում պետք է կյանքի կոչի ենթահանձնաժողովներ, ճշտի ընտրությունների օրը և զբաղվի դրա հետ կապված տարբեր հարցերով: Համայնքի ճակատագրով մտահոգ անձանց հուզող հիմնական խնդիրներից կարելի է թվարկել հետևյալները՝

1- **<u>Պատգամավորների քանակի նվազեցում:</u>**

Յուրաքանչյուր 2000 հոգու դիմաց պետք է ընտրվի մեկ պատգամավոր, մինչդեռ 56 պատգամավորների առկայությունը չի համապատասխանում համայնքի բնակչության թվին, ուստի այս հարցը պետք է կարգավորվի: Այստեղ պատգամավորների խմբից պետք է հանել 7 հոգևորականներին, որոնք առանց ընտրության և ավելի շուտ ԹՀԹ-ի բարեխնամ առաջորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանի միջոցով են նշանակվում: Իսկ տարբեր թաղերում հայության քանակը ճշտելու համար կարելի է դիմել հետևյալ աղբյուրներին՝

ա- Պետական վիճակագրությանը, որը կատարվել է վերջերս,

բ- Հոգևորականների ու դպրոցների տվյալներին: Այս բոլորը պետք է լինի թափանցիկ, որպեսզի կանխի որևէ բարդության առաջացմանը համայնքում:

2- **<u>Ընտրական կանոնակարգի բարելավում:</u>**

Մեր թեմի կանոնագրության մեջ գոյություն ունեն շատ անճշտություններ և չհստակեցված կետեր ընտրությունների անցկացման հարցի շուրջ, որոնք կարիք ունեն բարեկարգվելու և ըստ պայմանների հարմարեցնելու:

3- **<u>Հայերեն և պարսկերեն կանոնագրությունների համադրում և վերջնական ճշտում այդ կապակցությամբ:</u>**

Այսինքն՝ ճշտել, թե դրանցից որով պետք է առաջնորդվեն համայնքն ու պատգամավորները: Քանզի նկատվել է, որ ոմանք ըստ իրենց տեսակետների են հիմնավորում իրենց մոտեցումները՝ հենվելով երբեմն հայերեն, երբեմն էլ՝ պարսկերեն տարբերակների վրա: Բացի այդ, կանոնագրությունների միջև գոյություն ունեն նաև հակասական մոտեցումներ անձնափոխանորդների և այլ հարցերի շուրջ:

Հույսով ենք, նորընտիր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, մի կողմ դնելով սեփական գաղափարախոսությունն ու մոտեցումները, կկարողանա արդար ընտրություններ անցկացնել համայնքում:

ԹՀԹ-ի ՊԺ-ից

Թեհրանի Հայոց Թեմի Պատգամավորական Ժողովի 50 և 51-րդ նիստերը պետք է տեղի ունենային հուլիսի 28-ին և 29-ին: Առաջին նիստը հազիվ քվորում ունեցավ և հիմնական թեման էր՝ Կրոնական Խորհրդի միամյա գործունեության եւ Թեմական Խորհրդի նախահաշվի ներկայացումն ու վավերացումը:

Հաջորդ նիստը, որը պետք է տեղի ունենար հաջորդ օրը՝ հուլիսի 29-ին, պատգամավորների բացակայության և նիստի քվորում չունենալու հետևանքով տեղի չունեցավ:

Օգոստոսի 19-ին և 20-ին պետք է տեղի ունենար Պատգամավորական Ժողովի երկու նիստեր: Առաջին նիստում քննարկվեցին մի շարք հարցեր և վավերացվեց «Թունյան» դպրոցի կապիտալ շինարարության հարցը: Հայաստանում գետին գնելու համար դրամ հատկացնելը, որի ծրագիրը և դրա հետ կապված այլ հարցեր պետք է ուսումնասիրվի և հաստատվի հետագայում, և Զեյթուն քաղաքամասի Ս. Գրիգոր եկեղեցուն կից գետնի գնման հարցը հետաձգվեց՝ հաջրդ օրը պատգամավորների բացակայության հետևանքով նիստը քվորում չստանալու պատճառով: Օգոստոսի 26-ին պետք է քննարկվեին նշված հարցերը, սակայն նիստին ներկա էր միայն 16 պատգամավոր եւ քվորում չունենալու հետևանքով նիստը կրկին տեղի չունեցավ: Որոշված էր այդ նիստին ներկայացվեր Թեմական Խորհրդի կողմից կյանքի կոչված տնտեսական մարմնի պատրաստած զեկույցը:

Պատգամավորների բացակայությունների երևույթը պետք է ուսումնասիրվի և վեր հանվի դրա պատճառները, որպեսզի կանխվի, հակառակ դեպքում՝ հաջորդ Պատգամավորական Ժողովը կը հանդիպի մեծ դժվարության իր աշխատանքներում:

Մեկ ազգ մեկ մշակույթ փառատոն Թեհրանից մասնակցեցին երեք պարախմբեր

Այս տարվա ինքնագործ մշակութային փառատոնին մասնակցում են 16 երկրներից ժամանած շուրջ 1000 ներկայացուցիչներ: Ինչպես նախորդ փառատոներին, այս մեկին էլ ամենամեծ պատվիրակությունը ժամանել է ՌԴ (240), այնուհետեւ Վրաստանից (199) եւ Իրանից (172): Փառատոնին մասնակցում են նաեւ Լիբանանից, Թուրքիայից, Բելառուսից, Սիրիայից, Ղազախստանից, Հունգարիայից, Բուլղարիայից, ԱՄՆ-ից, Սերբիայից:

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում անցկացվեց «Սփյուռքահայ գրողների 4-րդ համահայկական համաժողով» եւ «Ոսկե ծիրան» 5-րդ միջազգային կինոփառատոնի աշխատանքները: Օգոստոսի 18-ին փառատոնի մասնակիցները այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Վեհարանում նրանց հետ հանդիպեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ վեհափառ հայրապետը եւ օրհնության կարգից հետո իր խոսքում կարեւորեց ազգահավաք ձեռնարկը եւ մաղթեց, որ «Տերը ամենախնամ իր Աջով պահպանի աշխարհասփյուռ հայությանը, շնորհի բազում հաջողություններ՝ առավել արդյունազարդելու հայ մշակույթը ձեր հավատավոր հոգու եւ մտքի արգասիքներով»:

Փառատոնի պաշտոնական բացումը կայացավ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Ողջույնի ուղերձ էր հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ կարեւորելով նման փառատոնի անցկացումը, նշել էր. «Հայրենիքի եւ գաղթօջախների բոլոր տարբերություններով հանդերձ՝ մեկ ազգի միասնական մշակույթի զարկերակը պետք է բաբախի համաչափ եւ զուգընթաց»: Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԱԳՆ Սփյուռքի հարցերով կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանը, կարեւորելով «մենքի» գաղափարը ու միասնության ամրապնդումը: Ողջույնի ուղերձ էր հղել ու հաջողություններ մաղթել նաեւ Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանը: 5-6 օրերի ընթացքում ընթացան 14-15 միջոցառումներ, որոնցից 10-ը՝ մարզերում եւ Արցախում:

Փառատոնի փակումը կատարվեց Հանրապետության հրապարակում օգոստոսի 23-ին, ժամը 20-ին: Փառատոնի շրջանակներում անցկացվեցին պարուսույցների վարպետության եւ երգչախմբերի խմբավարների համար դասընթացներ հանրապետության ճանաչված արվեստագետներ Վանուշ Խանամիրյանի, Կարեն Գեւորգյանի, մաեստրո Հովհաննես Չեքիջյանի եւ այլոց ղեկավարությամբ: Պատվիրակության ղեկավարների հետ քննարկում կանցկացնի Հրանուշ Հակոբյանը, որի ընթացքում կմշակվեն Հայաստան-սփյուռք համագործակցության հետագա ծրագրերը: Իսկ երեկ առավոտյան փառատոնի մասնակիցները այցելեցին Ծիծեռնակաբերդ, մեկ րոպե լռությամբ հարգեցին Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակը ու սպիտակ մեխակներով, ծնկած, օղակեցին անմար կրակը: Քիչ անց հիշատակի պուրակում տնկեցին մշտադալար եղեւնի ու ծանոթացան թանգարանի ցուցանմուշներին: Մաղթենք փառատոնին հաջողություններ, որը սկիզբ է առել դեռ 1999-ին ՀՀ մշակույթի նախարար Ռ. Շառոյանի նախաձեռնությամբ: Փառատոնն ընթանում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո, ՀՀ մշակույթի, ԱԳ նախարարությունների եւ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի կողմից:

Թեհրանից փառատոնին մասնակցում էին ՀՄՄ «ՐԱՖՖի» Համալիրի, «Սիփան» ՄՄ Միության եւ «Նայիրի» ՄՄ Միության պարախմբերը: Նոր Զուղայից նաև մասնակցել է մի պարախումբ:

Թեմական Խորհուրդը թաղերում հանդիպել է պատգամավորներին

2008 թվականի Օգոստոս ամսին Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի անդամները տարբեր հայկական թաղերում հանդիպում են ունեցել թաղերի պատգամավորների հետ: Յուրաքանչյուր թաղում մտերմիկ զրույց է ծավալվել թաղային հարցերի շուրջ: Օրինակ, դպրոցների վերանորոգման և «Թունյան» օրիորդաց դպրոցի կապիտալ շինարարության մասին: Խոսվել է արտագաղթի երևույթի մասին և մտքերի փոխանակում է եղել Սասուն թաղամասում ազգապատկան «Սոլթանի» գետնի վրա բնակարանաշինության հարցի շուրջ, որպեսզի ցածր գներով բնակարաններ վաճառվեն երիտասարդ զույգերին, կամ էլ՝ նրանց վարձը տրվի: Մոտ ապագայում տեղի են ունենալու 14-րդ Պատգամավորական Ժողովի ընտրությունները, որոշներն այն կարծիքին են, որ պետք է պատգամավորների քանակը կրճատվի: ԹԽ-ն տեղեկացրեց, որ, եթե Ընտրական Կենտրոնական հանձնախումբը նման մի առաջարկ անի, անպայման կբերվի Պատգամավորական Ժողովի քննարկմանը, որտեղ և կստանա իր հաստատումը: Պետք է ողջունել Թեմական Խորհրդի նման մտերմիկ հանդիպումներ կազմակերպելու նաժաձեռնությունը, որը մեր համայնքի տարբեր խավերին կարող է առավել մոտեցնել և համատեղել բոլորի ջանքները՝ համայնքային հարցերը լուծելու ուղղությամբ:

Բանակում Ռոբաթ Քարիմում

ՀՄՄ «ՐԱՖՖի» համալիրի սկաուտական բաժանմունքն օգոստոս ամսին անցկացրեց իր 28-րդ ընդհանուր բանակումը Ռոբաթ Քարիմում:

Պատասխանատուների և ծնողական խորհրդի անդամների հետ միասին բանակումին մասնակցեցին թվով 60 սկուտներ :

Բանակումը տևեց 6 օր: Այս 6 օրերի ընթացքում սկաուտներն զբաղվեցին տարբեր աշխատանքներով, սովորեցին և ներկայացրեցին տիկնիկային թատրոններ, երգեր ու բազմազան խաղեր, ունեցան տարբեր ֆիզիկական աշխատանքներ, օրինակ՝ կամուրջ պատրաստել և վրայից քայլել, միաժամանակ ստանալով տարբեր նոր գիտելիքներ:

Բանակումի հետաքրքիր աշխատանքներից կարելի է նշել ընդհանուր խաղերն ու խարույկահանդեսները, որոնց ընթացքում բանակավայրի անդամները հավաքվում էին իրար շուրջ և հաճելի պահեր անցկացնում միմյանց հետ, որը և խթանում էր մտերմությանն ու միասնականությանը:

Բանակումի հետաքրքիր աշխատանքների թվում կարելի է նշել այցելությունը «Ռոբաթ» երշիկի և նրբերշիկի գործարան, որի արդյունքում սկաուտները ծանոթացան երշիկ պատրաստելու տեխնոլոգիային:

Բանակումի ղեկավար կազմում էին՝ սկաուտապետ Սևան Սահակյանը, սկաուտապետի օգնական Սիունե Ղարիբյանը, Գայլիկների հատվածի պատասխանատու Լեռնիկ Վարդումյանը, Արծվիկների հատվածի պատասխանատու Անայիս Մահմուդյանը, Արիների հատվածի պատասխանատու՝ Արութին Մահմուդյանը և Երեցների փաղանգի պատասխանատու Ռենիա Փիրնազարյանը, իսկ բանակումի ընդհանուր պատասխանատուն էր Արենուշների հատուածի պատասխանատու Հուսինե Սաֆարյանը: Ծնողական խորհրդի պատասխանատուն էր պրն. Հրայր Աբդալյանը:

Բացի վերը նշված պատասխանատուներից, բանակումի տարբեր աշխատանքների համար նշանակվել էին նաև որոշակի պատասխանատուներ ըստ հետևյալի.

- հրամանատար՝ Առնո Աբդալյան,
- պահակապետ՝ Մհեր Խեչումյան,
- խարույկի պատ.՝ Լիլիթ Սարդարյան,
- հոսանքի և մաքրության պատ.՝ Էջմին Վարդումյան,
- ջրի պատ.՝ Սարմեն Դիլանչյան,
- տեղեկատու՝ Մինելի Կարապետյան,
- պահեստի պատ.՝ Վահե Ծատրյան:

Բոլոր սկաուտներին և ղեկավար կազմին ցանկանում ենք քաջ առողջություն, արիություն և հաջողություն իրենց աշխատանքներում և ուսման մեջ:

Թղթակից՝ Հուսինե Սաֆարյան

Հայաստան

ՆԱՎԹԱՁՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Հայաստանում հայ-ռուս-իրանական համագործակցությամբ նավթազտարանի կառուցման աշխատանքների համակարգման նպատակով ստեղծված եռակողմ աշխատանքային խմբի հերթական հանդիպումը տեղի կունենա սեպտեմբերին: Ինչպես լրագրողներին ասաց էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը, նշված խմբի աշխատանքի հիման վրա աշնանը որոշակիություն կմտցվի ապագա ծրագրերում եւ նավթազտարանի կառուցման ժամկետներում: Ընթացքի մեջ են տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքները: Խոշոր այդ ծրագրի իրագործման, գործարանի կառուցման համար կպահանջվեն հինգ տարի եւ ավելի քան 2 միլիարդ դոլարի ներդրում: Ներդրումների բաժնեմասերի հարցը քննարկման փուլում է, եռակողմ բանակցությունները փորձում են լուծումներ տալ այդ խնդրին եւս: Ակնկալվում է, որ գործարանը տարեկան 7,5 միլիոն տոննա արտադրանք կտա:

Մեթյու Բրայզա. Լեռնային Ղարաբաղի բնակիչները հանրապետության կարգավիճակի հարցը կլուծեն հանրաքվեով

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնականի տեղակալ, ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ Մեթյու Բրայզան հայտարարել է, թե ղարաբաղցիներն իրենք կորոշեն՝ հանրապետությունն անցնելու է Ադրբեջանի իրավասության ներքո, թե անկախություն է ստանալու: «Հանրաքվե է անցկացվելու, եւ դա կորոշեն ղարաբաղցիներն իրենք»,- ըստ «Ինտերֆաքս»-ի՝ Մոսկվայում լրագրողներին ասել է Բրայզան՝ ամփոփելով Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների միջեւ կայացած հանդիպման արդյունքները:

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՀԱՐՑՈՎ ՍՏԵՂԾՎԵԼՈՒ Է ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Իրան-Հայաստան երկաթուղու կառուցելու համար Հայաստանը չի սպասի մինչ աբխազական երկաթուղին կառուցվի: Այժմ արդեն երեք նախագծեր կան՝ համապատասխանաբար 440 կմ, 449 կմ եւ 397 կմ երկարություններով: Երեք ուղղություններ են նախանշվում՝ Սյունիքից մինչեւ՝ առաջին տարբերակը՝ Գագարին ավան, երկրորդը՝ Վարդենիս եւ երրորդը՝ Երասխ: Տրանսպորտի եւ կապի նախարարի տեղեկացմամբ, նախնական տեսակետով ավելի հավանական է թվում դեպի Գագարին-Գավառ-Մարտունի ուղղությունը, որից հետո Ֆիոլետովոյով մինչեւ Վանաձոր, ապա Վրաստան բեռներ տեղափոխելն ավելի դյուրին կլինի:

Երեւանում տրանսպորտային փոխադրումների թանկացման հնարավորության մասին Գուրգեն Սարգսյանը նշեց, որ ավտոբուսների քանակն ավելացնելու եւ նրանց գործունեությունն արդյունավետ դարձնելու համար պետք է տնտեսական լծակներ կիրառվեն: Մասնավորապես ավտոբուսների նկատմամբ պետք է կիրառվի այլ հարկային քաղաքականություն, միկրոավտոբուսների նկատմամբ՝ այլ, տաքսիների նկատմամբ՝ այլ:

Այն հարցին էլ, թե հանրահավաքային օրերին մարզերից Երեւան եկող երթուղիները կանոնավոր չեն աշխատում, նախարարը պատասխանեց, որ յուրաքանչյուր անգամ նման լուրեր են տարածվում, բայց ոչ մի կոնկրետ դեպք չի նշվում, որտեղ ասվի, որ այս երթուղու այս վարորդին խոչընդոտել են: Նախարարի հավաստմամբ, չվերթերի խախտումներ լինում են ամեն օր: Երեք ամսվա ընթացքում գրանցվել է 408 այդպիսի դեպք, որոնց համար վճարվել է 6 մլն 401 հազար դրամ:

Սիյուռք

ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐՋԻՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ «ԵՐԿԻՐ» ՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

2008-ի հուլիսի 17-ին Վրաստանի Սամցխե-Ջավախք տարածաշրջանի Ախալքալաք քաղաքում ոստիկանության պետ Սամվել Պետրոսյանի տան մոտակայքում տեղի ունեցավ պայթյուն, որից որեւէ տուժված չգրանցվեց:

Պայթյունից անմիջապես հետո ոստիկանությունը նախաձեռնեց հալածանքների մի աննախադեպ ալիք՝ ուղղված «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինք քաղաքական շարժման ակտիվիստների դեմ: Այսպես, Դաշինքի անդամ 10-15 հոգի ծեծի եւ բռնության գործադրմամբ բերման ենթարկվեցին ոստիկանություն: Ոստիկանները ներխուժեցին Դաշինքին պատկանող երիտասարդական ռադիոյի շենքը՝ ջարդելով մուտքի եւ սենյակների դռները եւ պատճառելով այլ ավերածություններ: Շենքում որեւէ զենք կամ զինամթերք չգտնվեց:

Հուլիսի 17-ին, ժամը 20:00-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները, ինչպես նաեւ քաղաքացիական հագուստով զինված անձինք, շուրջ 40 հոգի, ներխուժեցին «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի անդամ Գուրգեն Շիրինյանի տուն: Գուրգենի հոր նկատմամբ բռնություն կիրառվեց, իսկ ոստիկաններից մեկը՝ Արթուր Բերուջանյան անունով սպանվեց: Ոստիկանությունը հայտարարեց, որ Գուրգեն Շիրինյանը դիմել է փախուստի. նրա հայրն ու հորաքույրը ձերբակալվեցին:

Հուլիսի 18-ին, «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը տարածեց հայտարարություն, որտեղ տեղի ունեցածը որակեց որպես սադրանք՝ ուղղված իրենց կառույցի կազմալուծմանը: Դաշինքը պահանջեց իշխանություններից տեղի ունեցածի անաչառ եւ մասնագիտական հետաքննություն, որը կբացահայտի կատարվածի իրական մեղավորներին:

Հուլիսի 20-ի կեսօրին սպանվեց Արմեն Գաբրիելյան անունով մեկ այլ ոստիկան: Այս անգամ իշխանությունները հայտարարեցին, որ սպանված ոստիկանը ինքնասպանություն է գործել:

Հուլիսի 21-ին՝ վաղ առավոտյան ժամը 4:00-ի սահմաններում զինված եւ դիմակավորված վրացի հատուկ ջոկատայիններ ներխուժեցին «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի առաջնորդ Վահագն Չախալյանի տուն եւ ձերբակալեցին ընտանիքի բոլոր անդամներին: Ժամը 5:00-ի սահմաններում Վահագն Չախալյանի մայրը ազատ արձակվեց, բայց Վահագնը, նրա հայրը եւ նրա անչափահաս եղբայրը տեղափոխվեցին Ախալցխա նահանգային կենտրոն: Ավելի ուշ նրանք տեղափոխվեցին Թբիլիսի, որտեղ նրանք շարունակում են պահվել կալանքի տակ առ այսօր: Վահագն Չախալյանի, նրա հոր եւ եղբոր նախնական կալանքի ժամկետը անմիջապես երկարացվեց երկու ամսով:

Սրան զուգահեռաբար, հատուկջոկատայինները եւս մեկ անգամ ներխուժեցին Երիտասարդական ռադիոյի շենքը, բայց այս անգամ այնտեղ «գտնվեց» եւ առգրավվեց զենք եւ զինամթերք:

Ներկա դրությամբ իշխանությունները կալանքի տակ են պահում Գուրգեն Շիրինյանի հորը՝ Հարություն Շիրինյանին, Գուրգեն Շիրինյանի հորաքրոջը՝ Կարինե Շիրինյանին, ինչպես նաեւ՝ Վահագն Չախալյանին, Վահագն Չախալյանի հորը՝ Ռուբեն Չախալյանին եւ եղբորը՝ Արմեն Չախալյանին: Երիտասարդական ռադիոյի շենքը փակված ու կնքված է, այնտեղ գտնվող բոլոր համակարգիչները եւ այլ գույքը առգրավված են:

Հուլիսի 23-ին հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը, Վրաստանում գործող իր «Երկիր-Վրաստան» մասնաճյուղի հետ համագործակցաբար, փաստաբանից, օպերատորից եւ միության անդամներից կազմված փաստահավաք խումբ ուղարկեց Ախալքալաք: Խումբը հարցազրույցներ անցկացրեց կալանավորված անձանց բարեկամների եւ հարեւանների, ինչպես նաեւ ոստիկանության աշխատակիցների հետ: Խումբը նաեւ այցելեց եւ նկարահանումներ կատարեց դեպքերի հիմնական վայրերում:

Ոստիկանության աշխատակիցները նվաստացուցիչ վերաբերմունք են ցուցաբերել Գուրգեն Շիրինյանի հարազատների նկատմամբ. մասնավորապես, Գուրգեն Շիրինյանի հորը ապտակ է հասցվել, նա այնուհետեւ դաժան ծեծի է ենթարկվել:

Գուրգեն Շիրինյանի հայրը եւ հորաքույրը ձերբակալվել, ապա նաեւ կալանավորվել են անօրինական, առանց որեւէ հիմքի եւ այն պատճառաբանությամբ, որ իբր իրավապահ մարմինները պետք է պարզեն, թե նրանց տնից հայտնաբերված զինամթերքը ո՞ւմ է պատկանում:

Չախալյանների տան խուզարկության ընթացքում եւս զենք-զինամթերք է «հայտնաբերվել», ինչը առիթ է հանդիսացել նրա եւ նրա ընտանիքի անդամների ձերբակալման համար: Սակայն այստեղ եւս ընթերականներ խուզարկությանը չեն մասնակցել:

Ո՛չ Վահագն Չախալյանին եւ ո՛չ էլ նրա ընտանիքի որեւէ անդամի ցույց չի տրվել խուզարկություն կատարելու համապատասխան որոշումը:

Չախալյանի ընտանիքի անդամների ձերբակալությունը եւս ուղեկցվել է բռնությամբ, իսկ Ռուբեն, Վահագն եւ Արմեն Չախալյանների նկատմամբ ծեծ եւ սպառնալիքներ են գործադրվել:

Չախալյանի մայրը՝ Գայանե Չախալյանը եւս ձերբակալվել է: Նա ձերբակալվածի կարգավիճակով շուրջ մեկ ժամ պահվել է ոստիկանությունում, նրան հարցաքննել են, սակայն ցուցմունքը չեն արձանագրել: Վերջապես, նրան սպառնացել, այնուհետեւ ազատ են արձակել առանց որեւէ բացատրություն տալու:

Արմեն Չախալյանը, որը անչափահաս է, հարցաքննվել է առանց իր ծնողների կամ որեւէ անկողմնակալ չափահաս անձի մասնակցության:

Վերոնշյալ անձանցից բացի, որոնք շարունակում են մնալ կալանքի տակ, բազմաթիվ այլ անձինք ձերբակալվել էին, հարցաքննվել էին, նրանց բոլորին սպառնացել էին, շատերը ծեծվել, այնուհետեւ ազատ էին արձակվել առանց որեւէ բացատրության եւ նրանց ցուցմունքների համապատասխան կարգով արձանագրման:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը 2006 թ. հոկտեմբերին մասնակցել էր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, նրան հաջողվել էր հավաքել ձայների 30%-ը եւ դրան համապատասխանաբար ստանալ 3 տեղ Ախալքալաքի սակրեբուլոյում (տեղական ինքնակառավարման մարմին): Այնուամենայնիվ, Դաշինքը չընդունեց ընտրությունների արդյունքները՝ հայտարարելով, որ դրանք կեղծված են: Դաշինքի առաջնորդները եւ հատկապես Վահագն Չախալյանը հետեւողական պայքար են մղում հայ փոքրամասնության իրավունքների համար: Հիմնվելով վերոնշյալ փաստերի վրա՝ «Երկիր» միությունը հաստատապես համոզված է, որ Չախալյանի ձերբակալությունը եւ դրան հաջորդած կալանքը բացառապես քաղաքական դրդապատճառներից են բխում:

«Երկիր» միությունը գտնում է, որ Ախալքալաքում տեղի ունեցած վերջին դեպքերը փոքրամասնությունների խնդիրներին իրական լուծումներ տալու վրացական իշխանությունների չկամության հետեւանք են: Փոխարենը վրացական իշխանությունները օրինական բողոքի ցանկացած դրսեւորում ճնշելու նպատակով գերադասում են բռնի ուժ կիրառել:

Արդ, «Երկիր» միությունը կոչ է անում վրացական իշխանություններին.

երաշխավորել Ախալքալաքի վերջին դեպքերի արդար եւ անկողմնակալ հետաքննությունը,

անհապաղ ազատ արձակել Վահագն Չախալյանի եւ Գուրգեն Շիրինյանի բոլոր ազգականներին,

անհապաղ հետաքննել մարդու իրավունքի խախտման բոլոր դեպքերը, որոնք տեղի են ունեցել Ախալքալաքի վերջին իրադարձությունների ընթացքում, եւ, հատկապես, մարդու իրավունքների խախտումները, որոնք տեղի են ունեցել ձերբակալությունների, հարցաքննումների եւ կալանավորման ժամանակ,

իրականացնել ազգությամբ հայ երկու ոստիկանների սպանության դեպքի արդար եւ անկողմնակալ հետաքննություն,

երաշխավորել արդար եւ անկողմնակալ դատավարության Վահագն Չախալյանի իրավունքը:

«Երկիր» միությունը նաեւ կոչ է անում Վրաստանում օտարերկրյա ներկայացուցչություններին, միջազգային կազմակերպություններին եւ կառույցներին, միջազգային եւ տեղական իրավապաշտպան կազմակերպություններին եւ Վրաստանի մարդու իրավունքների պաշտպան պրն Սուբարիին.

ճանաչել Վահագն Չախալյանին եւ նրա բոլոր կալանավորված ազգականներին, ինչպես նաեւ Գուրգեն Շիրինյանի ազգականներին որպես քաղբանտարկյալների,

համապատասխան քայլեր ձեռնարկել դեպքի առիթով կալանավորված բոլոր անձանց կալանքի պայմանների դիտարկում կատարելու ուղղությամբ, որպեսզի այլեւս ապահովվի խոշտանգումների եւ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու, ինչպես նաեւ՝ մարդասիրական վերաբերմունքի եւ մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման նրանց իրավունքները:

«Երկիր» միությունը դիմում է վրացական լրատվամիջոցներին՝ վրացական եւ միջազգային հանրության տեղեկացված լինելու իրավունքը հարգելու, այս գործի տեղեկատվական շրջափակումը ճեղքելու, անկողմնակալ եւ մանրամասն լուսաբանումն ապահովելու կոչով:

«Երկիր» միությունն իր մտահոգությունն է հայտնում այն տագնապալի սոցիալ-քաղաքական եւ հոգեբանական հնարավոր հետեւանքների կապակցությամբ, որոնք կարող են ունենալ Ջավախքի հայ փոքրամասնության վրա վերջին իրադարձությունները: Մենք կոչ ենք անում վրացական իշխանություններին, ինչպես նաեւ միջազգային եւ տեղական կազմակերպություններին անհապաղ գործուն միջոցներ ձեռնարկել այս վերջին ճգնաժամային զարգացումների բոլոր բացասական հետեւանքները վերացնելու ուղղությամբ

Հասարակական

Սփյուռք-Հայրենիք հարաբերություն - հասկացություն

«Լույս ամսագիր»: Ստորև ներկայացնում ենք մեր ընկերներից ստացված հոդվածը, որն, ըստ մեր ժողովրդավարական հիմունքների, ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը: Սակայն պետք է նշենք, որ մենք չենք կիսում բոլոր տեսակետները: Կխնդրենք ընթերցողներից և համայնքի մտավորականներից այս կապակցությամբ երկխոսություն ծավալեն և մեզ ներկայացնեն իրենց տեսակետները:

Վերջին տարիներին շատ է խոսվում Սփյուռք-Հայրենիք հարաբերությունների մասին: Յուրաքանչյուրը փորձում է իր մեկնաբանությամբ բացատրել եւ պարզաբանել այդ խնդիրը: Սփյուռք-Հայրենիք հարաբերություն երեւույթը կարեւորվեց 20-րդ դարի երկրորդ տասնամյակից սկսած եւ դարձավ սփյուռքի համախմբման առանցք: Համախմբման այդ առանցքը սփյուռքի համար ավելի կարեւոր դարձավ, երբ ցեղասպանությունից վերապրած սերունդը առնվազն մոտ ապագայում իր կորցրած հայրենիքը վերադառնալու եւ իր պապենական հողի վրա ապրելու հույսը կորցրեց: Իսկ մյուս կողմից՝ արմատավորվելով ու հիմնավորվելով իր ապաստարան գտած երկրներում, սկսեց իր կյանքի նոր փուլը: Ապագայի հույսին ապրելով փորձեց համախմբվելու առանցք գտնել: Համախմբման առանցք դարձավ իր կորցրած պապենական երկիրը վերադարձնելու եւ ունեցած այն մյուս կես՝ հույսեր փայփայող Հայրենիքը՝ Արեւելահայաստանը:

Դեռ Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանում սփյուռքը փորձում էր այդ հարցին ճիշտ մոտեցում ցուցաբերել: Խորհրդային Հայաստանին գաղափարապես մոտ եւ բոլոր ժողովրդավարական կուսակցությունների ու կազմակերպությունների, այդ թվում նաեւ սփյուռքի մեծ հատվածի համախմբման առանցքը խորհրդային Հայաստանի շուրջ համախմբվելն էր: Այդ նույն ժամանակահատվածում կային նաեւ կուսակցություններ, կազմակերպություններ եւ ժողովրդի մի հատված, որոնք միանալով արեւմտյան աշխարհին, իրենց համախմբման առանցքը դարձրել էին Խորհրդային Հայաստանի դեմ պայքարը, Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ից ,ազատագրելու եւ նրան արեւմտյան աշխարհին միացնելու գաղափարը: վերջինիս համախմբման գործում առանցքային դեր ուներ դաշնակցությունը կուսակցությունը: Անթիլիասի կաթողիկոսությունը Էջմիածնի Մայր աթոռի դեմ մղելը՝ եկեղեցիների մեջ պառակտում առաջացնելը, Անթիլիասյան թեմը որպես գործիք՝ խորհրդային Հայաստանի՝ Էջմիածնի դեմ օգտագործելը՝ դաշնակցությունը նույնպես ծառայեցնում էր այդ նպատակին:

Ինչեւէ, սփյուռք-հայրենիք հարաբերությունը մինչեւ Խորհրդային Միության փլուզումը գաղափարային, քաղաքական եւ դասակարգային բնույթ էր կրում: Պայքարը քաղաքական գաղափարների պայքար էր, արեւելքի կամ արեւմուտքի բեւեռներց մեկին միանալու՝ մյուսի դեմ պայքարելու խնդիր էր: Դա ամենակարեւոր հատկանիշներից էր, ինչը հաճախ մոռացության է մատնվում կամ էլ շատերի կողմից դիտավորյալ հաշվի չի առնվում սփյուռք-հայրենիք հարաբերությունների վերլուծություններում ու բացատրություններում: Հայաստանի անկախությունից հետո, սփյուռքի այն հատվածը, որը համախմբվում էր խորհրդային Հայաստանի շուրջ՝ կորցրեց իր հիմնավորված համախմբման առանցքը: Անկախության առաջին շրջանում. արցախի հարցը, երկրաշարժը, պատերազմը եւ այլն, համախմբեց ո՛չ միայն Հայաստանի ժողովրդին, այլ ամբողջ հայությանը: Դա համայն հայության համախմբման առանցք դարձավ կարճ ժամանակահատվածում, քանի որ համայն հայությանը առնչվող խնդիր կար:

Հայաստանի անկախությունից հետո, ազատ շուկայական հասարակարգի բերումով՝ հասարակական սոցիալ-տնտեսական բեւեռացումը հանգեցրեց քաղաքական նոր հոսանքների ստեղծմանն ու նրանց կողմից իշխանության գալու քաղաքական թեժ պայքարին: Այդ իսկ պատճառով էլ Հայրենիքի շուրջ համախմբման առանցքը՝ սփյուռքի համար նորից դարձավ քաղաքական, գաղափարական եւ դասակարգային պայքարի սկզբունքը: Համազգային արժեքները կրող գաղափարները իրենց տեղը նահանջեցին դասակարգային, քաղաքական պայքարին:

Հայաստանից արտագաղթող քաղաքացիները իրենց հետ կրում էին նաեւ այդ հոսանքների քաղաքական տեսակետներն ու համակրանքը, ինչի պատճառով էլ սփյուռքում ձեւավորեց քաղաքական նոր մթնոլորտ, նոր մոտեցում՝ Հայաստանի իշխանությունների հանդեպ:

Սփյուռք-հայրենիք հարաբերությունները եւ սփյուռքի համախմբման միջոցն ու ձեւը տարբերվում է նախկինից: Հայաստանից մասայական արտահոսքը՝ սկսած 1992 թվից,

փոխեց սփյուռքի դասական դեմքը: Մոտավորապես երկու միլ. արտագաղթած Հայաստանի քաղաքացիներ բնակվելով արտասահմանյան երկրներում, հիմնականում Ռուսաստանում, ավելի շատ սերտ կապեր ունեն Հայաստանի հետ, քան մյուսները: Նրանք սերտ կապեր ունեն իրենց ընտանիքի անդամների, հարազատների, բարեկամների եւ ընկերների հետ եւ Եւ այդ հարաբերությունների ու կապերի շնորհիվ նրանք տեղեկություններ են ստանում՝ Հայաստանում տեղի ունեցող առօրյա խնդիրների մասին, իրենց անմիջական ֆինանսական օգնությունն են ցուցաբերում նաեւ իրենց ընտանիքին, հարազատներին ու բարեկամներին: Հայաստանից արտագաղթողները իրենց հայրենիքից արմատախիլ չեն եղել, ինչպիսին են ցեղասպանությունից մազապուրծ եղած վերապրող արեւմտահայությունը: Նրանք իրենց համարում են դեռ Հայաստանի քաղաքացի եւ տարբեր առիթներով առնչվում են Հայաստանում տիրող իրավիճակի հետ: Այդ պատճառով էլ նրանք առաջինն են արձագանքում Հայաստանում տեղի ունեցած ցանկացած հարցին:

Հայաստանի տնտեսական, քաղաքական եւ սոցիալական խնդիրները, Հայաստանի պետության արտաքին եւ ներքին քաղաքականությունը անմիջապես ազդում է սփյուռք-հայրենիք հարաբերությունների վրա: Մինչդեռ Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանում բոլոր մյուս ուժերը աջակցում էին Հայաստանի նորանկախ պետությանը, սփյուռքում որոշ ուժեր, հատկապես դաշնակցությունը դեմ լինելով Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքականությանը չէին աջակցում Հայաստանի պետությանը: Սփյուռքում ամենօրյա եւ ամենուր՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ հայհոյանքի ու նրա իշխանության տապալման պայքարի ոգին վառ պահելու համար, դաշնակցությունը ոչ մի ջանք չէր խնայում: Քոչարյանի իշխանության գալուց հետո , երբ դաշնակցությունը նրա իշխանության մասը կազմեց՝ մինչեւ օրս անվերապահ պաշտպանում է պետությանը եւ այդ քաղաքականությունը նույնպես դրսեւորվում է սփյուռքում՝ դաշնակցական շրջանակներում: Այնպես, որ սփյուռք-հայրենիք հարաբերությունները կրում են դասակարգային, գաղափարախոսական եւ քաղաքական բնույթ:

Հնարավո՞ր է սփյուռքը որպես մեկ միավոր հանդես գա՝ Հայաստանի կառավարության հետ իր հարաբերություններում:

Սփյուռք-հայրենիք հարաբերությունը բոլորովին այլ հասկացություն է՝ սփյուռք-հայաստանապետություն հարաբերություն հասկացությունից: Սփյուռք-Հայրենիք հարաբերությունը ոչ ոք չի հերքում, ոչ ոք չի անտեսում, բայց սփյուռք-հայաստանապետություն հարաբերությունները միշտ էլ կախված են եղել ու կախված կլինեն սփյուռքի քաղաքական տարբեր կազմակերպությունների, կուսակցությունների ու Հայաստանի պետության գաղափարախոսությունից, նրա ժողովրդավարական կեցվածքից ու որակից, նրա տնտեսական, ներքին ու արտաքին քաղաքականությունից: Անցյալի եւ ներկայի փորձը դա է վկայում:

Տարբեր են նաեւ «մեկ ազգ, մեկ հայրենիք, եւ «մեկ ազգ մեկ պետություն հասկացությունը: Ի՞նչ ենք հասկանում «մեկ ազգ, մեկ պետություն ասելով: «Մեկ ազգը մեկ հայրենիք-ը հասկանալի է (եթե ամբողջ հայոց աշխարհը համարենք Հայրենիք), բայց «մեկ ազգ մեկ պետություն առնվազն ներկա դրությամբ, անհասկանալի երեւութ է, քանի որ նախ ունենք մեկ դե յուրե եւ մեկ դեֆակտո հայկական պետություններ: Հնարավոր է նաեւ հրաշք տեղի ունենա ու Արեւմտյան Հայաստանում նույնպես մի առանձին հայկական պետություն ստեղծվի, այն ժամանակ կունենաք մեկ ազգ եւ երեք հայկական պետություններ: Ուրեմն կարելի է մեկ ազգ լինելով քանի պետություններ ունենալ: Սակայն դա չէ խնդիրը, խնդիրն այն է, որ պետություն ասելով, ինչպիսի՞ պետություն նկատի ունենք. բռնապետական, ժողովրդավարական, սոցիալիստական, կապիտալիստական եւ դրանց յուրաքանչյուրի յուրահատուկ տեսակնե՞րը: Այստեղ կարեւորը պետականությունն է: Պետականությունն ունի հստակ բացատրություն՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություն: Պետականությունը ասելով պետք է հասկանալ այդ երեք սյուները: Պետությունը կառուցվում է այդ երեք սյուների վրա: Իշխանությունները կամ դրանց ընդհանուր գումարը՝ պետությունը, ունի դասակարգային բնույթ եւ դրսեւորում է հասարակության այս կամ այն դասակարգի քաղաքական կամքը՝ նրա քաղաքական ներկայացուցիչն է: Մինչդեռ օրենսդիր եւ գործադիր մարմինները հասարակության այս կամ այն դասակարգի ուղղակի քաղաքական կամքի կրողներն են, դատական իշխանությունը, դատական համակարգը մնում է, եւ պետք է մնա՝ պետության քաղաքական ազդեցությունից դուրս, որպես անկախ համակարգ: Ոչ ոք պետականությանը դեմ չէ եւ չի հերքում: Բայց իշխանությունների այս կամ այն քաղաքականությանը կարելի է դեմ լինել կամ ընդհանրապես ձգտել դրա հիմնովին տապալմանը:

Այսօրվա Հայաստանի իշխանությունների եւ Իշխանության մաս կազմող կուսակցությունների ու առանձին քաղաքագետների ու քաղաքական գործիչների կողմից ընդդիմադիր ուժերին «պետականությունը թուլացնելու մեղադրանքը, մեղմ ասած անհիմն է: Պետականությունը կարելի է կորցնել՝ տվյալ պետության սխալ քաղաքականության հետեւանքով, բայց ոչ ժողովրդի՝ պետության դեմ իր արդարացի իրավունքների համար պայքարի հետեւանքով: Ամբողջ աշխարհում՝ կախված պետությունների ժողովրդավարական որակից ու բնույթից, ժողովուրդը պայքարում է իր իրավունքների եւ իր սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար՝ իր իշխանությունների, այսինքն իր պետության դեմ: Ոչ ոք չի ասում դատական կամ օրենսդիր իշխանությունը (որպես պետականության կառույց) պետք է վերանա: Ոչ ոք չի ասում գործադիր մարմին չենք ուզում: Դա կնշանակի անարխիա: Այնպես, որ պետականություն եւ իշխանություն ճիշտ հասկացությունը կարեւոր է ժողովուրդ-պետություն եւ «սփյուռք-հայրենիք հարաբերություն-ը ճիշտ հասկանալու եւ ճիշտ հիմքի վրա դնելու համար:

Սփուռք-հայրենիք հարաբերություններ.

Պարզ է, որ Հայաստանի կառավարության կողմից սփյուռք-հայրենիք հարաբերությունը ընկալվում է որպես սփյուռքի ֆինանսական ներուժի համախմբում եւ դրա ուղղորդումը դեպի Հայաստան: Սակայն այդ խնդիրը ուղղակի սփյուռքի բարեգործական կամ հարուստ բարեգործների եւ Հայաստանի պետության կամ Հայաստանի հասարակական հաստատությունների միջեւ հարաբերությունների խնդիր է: Սփյուռքի բարեգործական հիմնադրամները, եթե ցանկանում են Հայաստանի պետական օղակներով Հայաստանը զարգացնել, թե իրենց յուրահատուկ կառույցի միջոցով, դա իրենց խնդիրն է: Բարեգործությունը միշտ էլ լավ բան է ու արժանի է քաջալերանքի: Բայց դա բոլորովին այլ բան է, ինչ սփուռք-հայրենիք հարաբերությունը կամ, ավելի ճիշտ ասած, սփյուռք-հայաստանապետության հարաբերությունը: Առաջինը հոգեւոր-մշակութային-մարդասիրական սկզբունքի վրա է հենված, իսկ մյուսը՝ քաղաքական գաղափարախոսական սկզբունքի: Ուրախ կլինենք, եթե բոլոր բարեգործական

հիմնադրամները, առանձին անձինք համագործակցելով իրարու հետ՝ աջակցեին Հայաստանի տնտեսական զարգացմանն ու սոցիալական վիճակի բարելավմանը: Ցնայած, ցանկալի կլիներ, որ դա իրականացվեր յուրահատուկ կառույցի միջոցով, որպիսզի օգնությունը կարողանար իր իսկ նպատակին ծառայել, եւ ոչ թե դառնար մի խումբ անձանց հավելյալ եկամուտի աղբյուր:

Իսկ ինչը «սփյուռք-հայրենիք կամ, ավելի ճիշտ, սփյուռք-հայաստանապետության հարաբերություններին է վերաբերում, դա ոչ թե բարեգործական հարաբերություն է, այլ զուտ քաղաքական հարց : Ավելի ճիշտ ձեւակերպում կարելի է անել. Սփյուռք-Հայաստան քաղաքական հարաբերություն կամ սփյուռքի հետ Հայաստան պետության քաղաքական հարաբերություն: Մենք ուզենք, թե չուզենք, Հայստանի կառավարությունը ուզի, թե չուզի, ուղղակի առնչվում ու առնչվելու է այդ խնդրի հետ: Սփյուռքը միակուսակցական, միակարծիք եւ քաղաքականապես մեկ հավաքական միավոր չէ: Հայաստանի կառավարությունը սփյուռքի հետ իր հարաբերություններում պետք է հաշվի նստի սփյուռքի բազմության հետ, նրա բազմատեսակ քաղաքական եւ հասարակական ուժերի հետ: Իսկ այդ ուժերը միշտ չեն, որ կպաշտպանեն Հայաստանի իշխանություններին, նրանք նույնպես կարող են նաեւ խիստ քննադատել: «Սփյուռք-Հայրենիք հարաբերությունների մասին խոսելիս պետք է պատասխանել այն հարցին, թե սփյուռքի ո՞ր կուսակցությունը, ո՞ր քաղաքական ու հասարակական կազմակերպությունն է Հայաստանի կառավարության հետ հարաբերությունների մեջ մտնելու: Ո՞վ է սփյուռքը ներկայացնելու: Ինչքան որ պարզվեց, սփյուռքը միակազմ ու միակարծիք չէ, ապա ինչի՞ շուրջ պետք է սփյուռքը համախմբվի ու միաձայն մեկ կառույցով հանդես գա Հայաստանի քաղակական ներկայացուցչի՝ այսինքն՝ Հայաստանի կառավարության հետ հարաբերություններում: Սփյուռքի եւ Հայաստանի պետության միջեւ քաղաքական հարաբերությունների ճիշտ մշակումն է կարեւոր:

Սփյուռք-հայրենիք հարաբերություններում պետք է որոշվի. Ի՞նչ չափանիշներով, իրավական ի՞նչ սկզբունքով եւ ո՞ր մեխանիզմով կարելի է սփյուռքի հետ հարաբերվել: Եւ սփյուռքի իրավունքը որպես Հայ Ազգի մեծամասնություն՝ Հայաստանի քաղաքական կյանքում ինչպե՞ս կամ ինչքանո՞վ է կայանալու: Թե՛ Հայաստանի կառավարության եւ, թե՛ նրան մաս կազմող կոալիցիան անընդհատ խոսում են սփյուռք-հայրենիք հարաբերությունների մասին: Եթե Հայաստանի կառավարությունը իր իսկ արտասահմանում բնակվող քաղաքացու ամենատարրական, բայց ամենակարեւոր իրավունքը՝ այն է ընտրություններին մասնակցելը, ոտնակոխ է անում, ի՞նչ հարաբերությունների մասին է խոսքը:

Հայրենիքին օգնելը, նրա ժողովրդին ու նրա տնտեսական վիճակը զարգացնելը, բարեգործական, մարդասիրական աշխատանքներ կատարելը միշտ էլ ողջունելի են: Բայց պետությանը աջակցելը կամ նրա քաղաքական, գաղափարական հայացքները կիսել կամ չկիսելը պայմանավորված է քաղաքական կուսակցությունների, հասարակական հաստատությունների ու կազմակերպությունների աշխարհահայացքների ու քաղաքական դիրքորոշումները պետության գաղափարների, քաղաքական տեսակետների հետ համընկնելուց: Այդ սկզբունքից ելնելով է, որ հնարավոր չէ սփյուռքում մի ճակատ ստեղծել: Հայաստանի պետության կողմից ներքին եւ արտաքին քաղաքականության, այս կամ այն հարցի մոտեցման քաղաքականության որոշումները նույնպես եւ նույնքան արձագանք են գտնում սփյուռքում, ինչքան Հայաստանում:

Սփյուռք-հայրենիք հարաբերությունները կարող են ի՛չ-որ չափով իրականանալ հետեւյալ ձեւերով.

Բարեգործական հիմնադրամները պետք է բացեն իրենց գրասենյակները Հայաստանում: Մշակեն ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրեր, որպիսզի կարողանան ավելի ճիշտ Հայաստանի զարգացմանը նպաստել: Կոսմետիկ ծրագրերի միջոցով Հայաստանը չի զարգանա:

Հայաստանում աշխատող յուրաքանչյուր հասարակական նախաձեռնություն կամ կազմակերպություն պետք է ինքն ուղղակի հարաբերության մեջ մտնի սփյուռքում նմանատիպ աշխատանքով զբաղվող կազմակերպության հետ: Նույն կերպ կարող են նաեւ Հայաստանում աշխատող քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները հարաբերվել իրենց համակրող՝ սփյուռքում աշխատող քաղաքական կուսակցությունների կամ նույն ·աղափարները կրող՝ կազմակերպությունների հետ:

Հայաստանի պետությունը պետք է առանց խտրականության հաշվի նստի սփյուռքում այդ բոլոր ուժերի հետ, հաշվի առնելով նրանց կարծիքն ու առաջարկները: Պետք է աջակցի սփյուռքում աշխատող բոլոր մշակութային, հասարակական եւ կրթական հաստատություններին՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից:

Ցեղասպանության ճանաչման հարցի քաղաքական ներկայացուցիչն սփյուռ՞ռքն է, թե՞ Հայաստանի կառավարությունը:

Ցեղասպանության ճանաչման հարցի առաջատարը պետք է լինի սփյուռքն ու Հայաստանի ոչ պետական՝ գիտական եւ քաղաքական հաստատություններն ու կազմակերպությունները, քանի որ Հայաստան պետությունն այդ հարցը բարձրացնելով բարդացնում է իր հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման հարցը:

Ցեղասպանության ճանաչման խնդրի վերաբերյալ պետք է ստեղծվի նախ եւ առաջ համահայկական համաշխարհային (առանց Հայաստան պետության պաշտոնական մասնակցության ու միջամտության) մեկ հաստատություն, որը ի վիճակի կլինի համադրելու եւ մեկ քաղաքականությամբ, մեկ ռազմավարությամբ այդ հարցը առաջ մղելու: Անընդհատ «Հայ Դատի գրասենյակներ բացելով այդ խնդիրը այդ խնդրի լուծմանը չենք օգնի:

«Սփյուռքի Նախարարություն ստեղծելով չէ, որ Սփյուռք-Հայաստան հարաբերությունները կկարգավորվեն: Հայաստանի կառավարության կողմից հաշվի առնելով վերը նշված բոլոր փաստերը եւ համապատասխան քաղաքականություն մշակելով է, որ կարելի է նպաստել Սփյուռք-Հայրենիք ճիշտ հարաբերություններին: Սփյուռքի քաղաքական իրական կյանքի փաստը հաշվի չառնելը, անուշադրության մատնելն ու միակողմանի պետական շահի հետապնդումը չի նպաստի սփյուռք-հայրենիք հարաբերություններին: Ու այդ դեպքում «Սփյուռքի Նախարարությունը կդառնա ինքնանպատակ եւ ավելորդ ծախսերի եւս մի կառույց:

Երվանդ Խոսրովյան
Գերմանիա, 07 օգոստոսի 2008 թ.

Հարցազրույց

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՌԱԴԻԿԱԼ» ՕՐԱԹԵՐԹԻՆ

- Սեպտեմբերի 6-ին կայանալիք Թուրքիայի եւ Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը կարող է դիտվել որպես մեր տարածաշրջանում ամենաքաղաքականացված սպորտային միջոցառումը: Քաղաքական առումով ի՞նչ ակնկալիքներ ունեիք, երբ հրավիրեցիք Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին միասին դիտելու հանդիպումը:

- Իմ առաջնահերթ նպատակը մեր երկրների հարաբերությունների կարգավորումն էր: Նախագահի պաշտոնում իմ ընտրության առթիվ նախագահ Գյուլի հղած շնորհավորական ուղերձում խոսվում էր հարաբերությունների զարգացման հնարավորության մասին: Ավելի ուշ վարչապետ Էրդողանն արտահայտվեց երկխոսության համար դռների բաց լինելու մասին: Փոխադարձաբար, ես էլ որոշեցի օգտագործել այս հնարավորությունը: Առջեւում լավ սպորտային իրադարձություն է: Պատմության մեջ առաջին անգամ հանդիպում են ֆուտբոլի մեր ազգային հավաքականները: Դա կարող է լավ առիթ հանդիսանալ մեր հարաբերությունների զարգացման համար: Կարեւոր չէ, թե ինչպիսի արդյունք կգրանցվի, բայց հույս ունեմ, որ հանդիպումը հանդիսականներին հաճույք կպատճառի: Ոգեւորությունը մեծ է լինելու: Այս հանդիպումը մեր հարաբերություններում բացառիկ իրադարձություն է լինելու, եւ հուսով եմ, որ Հայաստանի եւ Թուրքիայի նախագահների ներկայությամբ դա էլ ավելի բացառիկ կդառնա: Մենք հարեւաններ ենք եւ մնալու ենք հարեւաններ: Կարծում եմ, որ բնականոն հարաբերություններ ունենալն ավելի օգտակար կլինի երկու ժողովուրդների համար: Գյուլին ուղղված իմ հրավերը պետք է դիտարկել հենց այդ համատեքստում:

- Անկարայում որոշակի մտավախություններ կան վերոհիշյալ հրավերի հետ կապված: Ինչպես օրինակ՝ սահմանային խնդիրները եւ այն, թե ինչպես կդիմավորեն նախագահ Գյուլին Երեւանում: Դուք կիսու՞մ եք այդ մտահոգությունները:

- Որեւէ մտավախություն կազմակերպչական հարցերի հետ կապված չի կարող լինել: Եթե մենք պետության նախագահի ենք հրավիրել, ապա նախագահ Գյուլին այդ կարգի այցելություններին պատշաճ մակարդակով ընդունելու համար կիրականացվեն բոլոր միջոցառումները:

- Ես հանդիպեցի Դաշնակցություն կուսակցության հետ եւ նրանք դեմ են Ձեր հրավերին: Ասում են, որ Երեւան ժամանելու դեպքում Գյուլին իրենց ձայնը լսել տալու համար անելու են հնարավոր ամեն ինչ:

- Կարծում եմ, որ իրենց ձայնը բարձրացնելու համար արվելիք միջոցառումները դուրս չեն գա նման կարգի պաշտոնական այցերի համար ընդունելի վերաբերմունքի շրջանակներից: Ոչ քաղաքակիրթ վերաբերմունք ցուցաբերողները Գյուլից առաջ դա արած կլինեն Հայաստանի եւ իմ դեմ, որովհետեւ հրավիրողը ես եմ:

- Ի՞նչ եք կարծում Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ էներգետիկայի եւ հաղորդակցության բնագավառում իրականացվող տարածաշրջանային նախագծերի վերաբերյալ, որոնք տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պարագայում, կարող են բարգավաճում բերել: Կցանկանա՞ արդյոք Հայաստանը միանալ այդ ծրագրերին: Դուք մտածու՞մ եք, որ մի օր Թուրքիայում այնպես կհյուրընկալվեք, ինչպես հյուրընկալվում են Ադրբեջանի եւ Վրաստանի ղեկավարները, եւ Թուրքիայի ղեկավարները առանց երկմտելու կընդունեն Երեւանից ստացված հրավերը:

- Գիտեք, մինչ այժմ իրականացված տարածաշրջանային ծրագրերից երկու դաս եմ քաղել: Առաջին, եթե տարածաշրջանի բոլոր երկրները չեն ներգրավվում կամ դրանցից մեկը բացառվում է, դա նոր բաժանարար գծեր է առաջացնում: Երկրորդ, երբ այդ ծրագրերում քաղաքական նկատառումները գերակայում են տնտեսականին, այդ ծրագրերը անհրաժեշտ հաջողություն չեն ունենում: Դա նման է այն բանին, երբ կառքը ձիու առջեւի մասից է կապվում:

- Ո՞ր ծրագրի մասին եք խոսում:

- Օրինակ, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը... Չէ՞ որ նման երկաթգիծ կա: Շատ քիչ ծախսերով այն կարելի է դարձնել շահագործելի: Շատ միջոցներ են ծախսվում Հայաստանին դուրս թողնելու համար: Նախկինում Հայաստանի ղեկավարներն այցելել են Թուրքիա: Ես էլ տարբեր պաշտոններում այցելել եմ Թուրքիա: Հավելեմ նաեւ, հարեւանների փոխայցելությունները նորմալ երեւույթ են, եւ դա չպետք է ընկալվի որպես հակառակ կողմին արված սիրալիություն: Մեր ջանքերն ուղղված են դրան:

- Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շինարարության մեկնարկի ժամանակ, նախագահներ Ալիեւի եւ Սաակաշվիլու ներկայությամբ, Աբդուլլահ Գյուլն ասաց, որ Հայաստանը կարող է մասնակցել տարածաշրջանային ծրագրերին, եթե հարգի միջազգային իրավունքը: Ըստ Ձեզ, նա ակնարկում էր 1921 թ. Կարսի պայմանագրով հաստատված առկա սահմա՞նը:

- Կարծում եմ, եթե Գյուլին հարցնեք, ինքն ավելի հստակ կպատասխանի: Միայն կարող եմ ասել, որ Հայաստանը կողմ է ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ մի շարք այլ միջազգային պայմանագրերի, հարգում է իր միջազգային պարտավորությունները:

- Հարցս ավելի հստակ ձեւակերպեմ. Հայաստանում կան որոշ շրջանակներ, որոնք Թուրքիայի մի մասը Արեւմտյան Հայաստան անվանելով, Սեւրի պայմանագրին համապատասխան, հողային պահանջներ ունեն: Դուք ընդունու՞մ եք, որ դժվար է ամբողջական դիվանագիտական հարաբերություններ հաստատել այն հարեւանների հետ, որոնք վիճարկում են Ձեր սահմանները: Ինչպիսի՞ն է Կարսի պայմանագրի օրինականության եւ ճանաչման մասին Ձեր տեսակետը՝ պաշտոնական դիրքորոշումը:

- Չեմ հիշում, որ որեւէ հայ պաշտոնյա արտահայտված լինի տարածքային պահանջների մասին: Բայց դա լսում եմ դիմացի կողմից: Կարծում եմ, որ ճիշտ չէ հիմք ընդունել առանձին հայտարարությունները: Եթե այդպես մոտենանք, Թուրքիայում անգամ կան այնպիսիք, ովքեր ասում են, որ Հայաստան անունով երկիր իրականում գոյություն չունի: Մենք չենք ուզում, որ Թուրքիայի հետ հարաբերություններում լինի որեւէ նախապայման: Արեւելյան-Արեւմտյան Հայաստան

արտահայտության հետ կապված մտահոգություններ լսում եմ նաեւ թուրք պաշտոնյաներից, ինչն ինձ համար տարօրինակ է: Դրանք դեռեւս 19-րդ դարից օգտագործված աշխարհագրական եզրեր են: Անցյալից եկող այս արտահայտությունը մոռանալու եւ ջնջելու հարցում համառելը նույնն է, ինչ մերժել Սպարտայի, Ռուսական կայսրության, Օսմանյան կայսրության կամ պատմական շատ աշխարհագրական տերմինների գոյությունը: Եթե մեր պաշտոնական քաղաքականությունը դա լիներ, մեր անունը կլիներ ոչ թե Հայաստանի Հանրապետություն, այլ՝ Արեւելյան Հայաստանի Հանրապետություն: Որեւէ հայ պաշտոնյա նման բան չի պնդել: Դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում այդ հարցերն ավելի հեշտությամբ կքննարկվեն: Ահա Ռուսաստանը սահմանային խնդիրներ ուներ կամ ունի Չինաստանի, Ճապոնիայի հետ, սակայն դա արգելք չի հանդիսանում դիվանագիտական հարաբերությունների համար:

- Գյուլին ուղարկած Ձեր հրավերից հետո Կովկասում տեղի ունեցան լուրջ զարգացումներ, ինչպես վրաց-ռուսական հակամարտությունը: Ի՞նչ կարծիքի եք Վրաստանից անջատվող Հարավային Օսիային եւ Աբխազիային սատարելու Ռուսաստանի քաղաքականության վերաբերյալ:

- Իրականում տեղի ունեցան ողբերգական իրադարձություններ, եղան մարդկային զոհեր: Դա մեկ անգամ եւս ցույց տվեց, թե նման հարցերում ինչի կարող է հանգեցնել սպառազինությունների մրցավազքը: Մենք կողմ ենք նման հարցերը բանակցությունների միջոցով լուծելուն: Մենք կողմ ենք ժողովուրդների ազատ կամարտահայտության հիման վրա՝ ինքնորոշման իրավունքը հարգելուն: Ցավալի է, որ նկատվում է իրավիճակի սրում եւ դա մեզ դուր չի գալիս: Մենք հավատում ենք, որ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դ. Մեդվեդեւի եւ Եվրոմիությունում նախագահող Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզիի համատեղ նախաձեռնած ծրագրի իրագործումը կբերի խաղաղություն եւ կայունություն: Մեզ համար շատ կարեւոր է խաղաղությունն ու կայունությունը: Ամեն ինչ մի կողմ՝ մեր առեւտրի ավելի քան 70%-ը կատարվում է Վրաստանի տարածքով:

- Վրաստանի երկաթգծի կամրջի պայթեցման հետեւանքով Երեւանում բենզինի հետ կապված դժվարություններ են առաջացել: Այդպե՞ս է:

- Ճիշտ է: Հույս ունենք, որ երկու օրում հարցը կլուծվի: Ակնհայտ է, որ տարածաշրջանի անկայունությունը Հայաստանի օգտին չէ: Դա ցույց է տալիս, որ մենք կայունության կարիք ունենք: Անկայունությունը երեք ամիս կամ երեք տարի ձգձգվելը էլ ավելի կավելացնի մեր խնդիրները:

- Ձեր արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանն արդեն դրական է արձագանքել Թուրքիայի վարչապետ Թայիփ Էրդողանի՝ Կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմի առաջարկին: Չե՞ք մանրամասնի այս հարցում Ձեր քաղաքականությունը:

- Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հայտնել է, որ դրական է վերաբերում տարածաշրջանում կայունության եւ անվտանգության համար երկխոսության վերաբերյալ Էրդողանի խոսքերին: Կարծում եմ, որ մեր արտաքին գործերի նախարարը շատ ճիշտ քայլ է կատարել: Առաջարկն ստանալու դեպքում մանրամասն կքննարկենք եւ մեր դիրքորոշումը կհայտնենք:

- Կարծում եք, որ Լեռնային Ղարաբաղի հարցը, որը լուրջ խնդիր է Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ Ձեր հարաբերություններում, կարո՞ղ է շուտով լուծվել: Կանխատեսու՞մ եք, որ Ադրբեջանի հետ համաձայնության գալը նոր մակարդակի կբարձրացնի քաղաքական եւ տնտեսական համագործակցությունը տարածաշրջանում:

- Ադրբեջանի նախագահ պարոն Ալիեւի հետ հունիսի 6-ին Սանկտ Պետերբուրգում մենք ունեցանք արդյունավետ հանդիպում: Երկու կողմերս էլ արտգործնախարարներին հանձնարարեցինք մադրիդյան սկզբունքների հիման վրա շարունակել աշխատանքները: Մինչ օրս երեք հանդիպում է տեղի ունեցել: Հուսով եմ, որ կարճ ժամանակահատվածում լուծում կգտնենք:

- Կարո՞ղ եք մոտավոր ժամկետ ասել:

- Մինչեւ Ադրբեջանում նախատեսվող նախագահական ընտրությունները այդ առումով որեւէ կանխատեսում անելը ճիշտ չի լինի: Ընտրություններից հետո կտեսնենք, թե ինչ զարգացումներ են տեղի ունենում:

- Դուք Հարավային Օսիայի եւ Աբխազիայի իրավիճակը նմանեցնու՞մ եք Լեռնային Ղարաբաղի իրավիճակին: Հարցնում եմ, որովհետեւ ասացիք, որ պետք է հաշվի առնել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը:

- Բոլոր հակամարտություններն ունեն նմանություններ եւ տարբերություններ: Կարծում եմ, որ նմանությունների եւ տարբերությունների վրա կենտրոնանալու փոխարեն, պետք է մտածել դասեր քաղելու մասին: Տեսնում եմ, որ հարցը ռազմական եղանակով լուծելու շահարկումները հանգեցնում են անկանխատեսելի եւ վտանգավոր հետեւանքների: Կուզենայի իմանալ, թե նախքան հակամարտությունը քանի՞ հոգի էր կանխատեսել դրա արդյունքները: Պետք է շատ ուշադիր լինել:

- Դրսից թվում է, թե Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունները Ցեղասպանության խնդրի պատճառով գտնվում են փակուղում: Ճի՞շտ է այդ տպավորությունը: Դուք համարում եք, որ հայ-թուրքական հարաբերություններ չեն կարող առաջ շարժվել մինչեւ Թուրքիան չճանաչի 1915 թվականի ողբերգական իրադարձությունները որպես ցեղասպանություն: Դա նախապայմա՞ն է:

- Ողջ աշխարհում գոյություն չունի գեթ մեկ հայ, ով չհավատա Ցեղասպանության փաստին: Սակայն, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման համար Ցեղասպանության ճանաչումը նախապայման չէ: Թերեւս դրա համար էլ ասում ենք, որ պատրաստ ենք Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն՝ առանց որեւէ նախապայմանների:

- Ո՞րն է Ձեր դիրքորոշումը 1915 թ. դեպքերի ուսումնասիրման նպատակով պատմաբանների հանձնաժողով կազմավորելու վերաբերյալ: Հնարավոր համարո՞ւմ եք, որ երկու հանձնաժողովներ՝ մեկը պատմաբանների, մյուսը՝ հարաբերությունները կարգավորելուն միտված, կարող են գործել զուգահեռ:

- Կարծում եմ, որ այս հարցում նոր մոտեցման անհրաժեշտություն կա: Որովհետեւ, ես չեմ հիշում, որ մինչ այժմ միջպետական խնդիրները լուծելու համար ոչ-պետական հանձնաժողով ստեղծված լինի: Ամենալավ լուծումը դիվանագիտական հարաբերությունների հաստատումն է: Այդ կերպ կառավարությունների միջեւ

ստեղծվելիք հանձնաժողովի շրջանակում կարող են ստեղծվել բազմաթիվ ենթահանձնաժողովներ եւ խմբեր: Ավելի վաղ ԱՄՆ-ում ստեղծվել էր նման մի հանձնաժողով: Արդյունք տվե՞ց: Երկրորդ՝ ձեր ասած մասնագետների եւ փորձագետների համար նորմալ աշխատանքային պայմանների ստեղծումն անհրաժեշտ է: Դրա համար էլ բնականոն դիվանագիտական հարաբերությունների առկայությունը անհրաժեշտություն է: Դիվանագիտական հարաբերությունների առկայության կամ բացակայության պարագաներում իրականացվող աշխատանքները միանգամայն տարբեր կլինեն:

- Հավատու՞մ եք, որ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ շարունակվող փակ դիվանագիտական հանդիպումները արդյունք կտան:

- Անկասկած, անհնար կլիներ իմ աջակցությունը, եթե չհավատայի որ արդյունք կտա: Սակայն, մյուս կողմից հավատում եմ, որ հարաբերությունների ընթացքը ցույց է տալիս, որ մենք՝ երկու երկրների առաջնորդներս, հասել ենք որոշումների կայացման փուլին: Դրանք հեշտ որոշումներ չեն լինելու: Հայաստանի եւ Թուրքիայի ողջ հասարակությունը չէ, որ հավանություն կտա այդ որոշումներին: Բայց վստահ եմ, որ դրական որոշումներին կաջակցի հասարակությունների մեծ մասը: Դրանով ես նկատի ունեմ ոչ թե դիվանագետների ջանքերը, այլ՝ ընդհանուր մթնոլորտը: Գյուլի շնորհավորական ուղերձը, Էրդողանի խոսքերը, իմ կողմից Գյուլին ուղղված հրավերը, անգամ Ձեզ հետ այս հարցազրույցն այդ մթնոլորտի մի մասն են կազմում: Այս իմաստով էլ հավատում եմ, որ հասել ենք որոշումների ընդունման փուլին:

- Գյուլի Երեւան գալ-չգալն ինչպե՞ս կազդի այդ իրավիճակի վրա:

- Կարծում եմ, որ կարեւոր կլինի: Քանզի կարեւոր որոշումները հեշտությամբ չեն կայացվում: Կարեւոր են նաեւ անձնական հարաբերությունները: Հանրության առջեւ խոսելը եւ դիմացինիդ աչքերի մեջ նայելով խոսելը տարբեր բաներ են: Եթե չհավատայի այս այցի կարեւորությանը, Գյուլին չէի հրավիրի: Մենք հարեւաններ ենք: Պատմության մեջ դժվար ժամանակներ ենք ունեցել: Սակայն Հայաստանը պատրաստ է հարաբերությունների զարգացմանը եւ նույնն էլ ակնկալում ենք Թուրքիայից:

Անցուդարձ

«ԲՈԼՈՐՍ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՀՈՂԻ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ»

Պատասխան հարցազրույցում «Ռադիկալին» ասել է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը

Թուրքական «Ռադիկալ» թերթը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հրապարակել էր օգոստոսի 28-ի համարում: Երեկ **«Ազգում»** թարգմանաբար լույս տեսած եւ թուրքական զանգվածային լրատվամիջոցներում լայն արձագանք գտած հարցազրույցը վարել էր Մուրադ Եթքինը: Հայաստանի նախագահի հարցազրույցի հրապարակման օրը նույն Եթքինը դրա գնահատականն ստանալու ակնկալիքով դիմել է Թուրքիայի նախագահին եւ հարցերին պատասխանելիս, թուրք լրագրողի արտահայտությամբ, «Սերժ Սարգսյանի նման պատմական ուղերձներ է հղել նաեւ Աբդուլլահ Գյուլը»:

«Բոլորս միեւնույն հողի զավակներն ենք» վերնագրով օգոստոսի 29-ին «Ռադիկալում» հրապարակված նախագահ Գյուլի հարցազրույցը թարգմանաբար ներկայացնում ենք ստորեւ:

- Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ասաց, որ սեպտեմբերի 6-ին Երեւանում ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը միասին դիտելը պատեհ առիթ է հարաբերությունների զարգացման համար: Որոշում ընդունե՞լ եք գնալ-չգնալու առնչությամբ:

- Ուշադիր կարդացի հարգարժան Սերժ Սարգսյանի հետ ձեր հարցազրույցը: Համարում եմ կարեւոր հարցազրույց: Ես դա ընկալեցի խնդիրների կարգավորմանն ու թյուրըմբռնումների հաղթահարմանը նպաստելու օրինակ բոլոր մակարդակներում: Հարգարժան Սարգսյանի հրավերի առնչությամբ կարող եմ ասել, որ ուսումնասիրությունները բազմակողմանիորեն շարունակվում են:

- Դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ սահմանների բացման առնչությամբ Հայաստանում կան պահանջ եւ ակնկալիքներ: Այս հարցում կարելի՞ է զարգացում ակնկալել:

- Անկեղծորեն աջակցում եմ տարածաշրջանի խաղաղության համար վերջին շրջանում ցուցաբերվող ջանքերին: Կարծում եմ, որ կարեւոր է առիթների օգտագործումը: Մեր ցանկությունը հետեւյալն է՝ ուզում ենք մեր խնդիրները լուծել բոլոր հարեւանների հետ: Շատ մեծ նշանակություն ենք տալիս հիմնախնդիրների երկխոսության ճանապարհով կարգավորմանը: Մենք տարածաշրջանում խնդիր լուծող երկիր ենք, իսկ Կովկասում խիստ կարեւորում ենք խաղաղությունն ու կայունությունը:

- Այդ դեպքում, ո՞րն է խնդիրների լուծմանը խանգարող հանգամանքը:

-Հավատացած եմ, որ սառեցված հակամարտությունների, առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը երկխոսության միջոցով եւ համարձակությամբ մեծապես կհանգստացնի եւ բարեկեցություն կպարգեւի տարածաշրջանի մարդկանց: Ես այս մասին Ղազախստանում՝ Աստանայի հանդիպմանը ասել էի նաեւ հարգարժան Սարգսյանին: Այս տարածաշրջանը մեր բոլորի տարածաշրջանն է: Բոլորս միեւնույն հողի զավակներն ենք: Պատմության մեջ տարիներ ի վեր թուրքերն ու հայերը միասին գոյակցել են այս հողում: Այն աստիճանի, որ օսմանցիները «հավատարիմ ազգ» հորջորջեցին հայերին, պետական կարեւոր պաշտոններում նշանակեցին նրանց: Ունեցել ենք դառը եւ քաղցր բազմաթիվ հուշեր: Ինչպես վերջին անգամ արտահայտվել էի Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծին նվիրված արարողությանը, մեր սրտով անցնում է օրերից մի օր տարածաշրջանի բոլոր երկրների մասնակցությունն այս նախագծերին: Հավատում եմ, որ մշակույթով եւ ավանդույթներով միմյանց շատ մոտ կանգնած տարածաշրջանի մարդիկ, որքան էլ էթնիկապես եւ կրոնով տարբերվեն, անվտանգ միջավայրի ստեղծման դեպքում հասնելու են ենթադրությունները գերազանցող կայունության եւ բարեկեցության մակարդակի: Ինչպես ասացի, ուշադիր հետեւում ենք զարգացումներին: